Արձանագրություն N 4
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հունիսի 2025թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ և Առափի բնակավայրերի տարածքում Ախուրյան գետի հունի մաքրման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիումը և «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն գնահատող հանձնաժողովի 20.06.2025 թվականի թիվ 3 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով՝ մասնակիցներ «ԿԱՄՈՒՐՋ ՇԻՆ» ՍՊԸ և «ՀՈԼՅՈՒՆ» ՍՊԸ կոնսորցիումը և «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով (այդ թվում շտկմամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/3-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Կ. Ալեյան
	_____	Կ. Սարգսյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան